ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ՄԵԾ ՊԱՐՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

«19» 06 2018թ.
հեռ. (0255) 6– 18 - 97
mail: metsparni.lori@mta.gov. am
թիվ ՄՊ-137/18

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
ՊՐ-Ն Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Կրկին Ձեզ եմ ներկայացնում Մեծ Պարնի համայնքի ղեկավարի 2018թվականի թիվ 29-30 որոշումները:

Առդիր 1 թերթ

Համայնքի ղեկավար՝ Գ. Պայլան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » հունիս 2018 թ. N 29-Ա

0252-0061 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՄԻԱՎՈՐԻ ԱՌԱՆՁՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 16.06.2005թ. թիր 904-Ն որոշումը, 19.01.2012 թվական թիվ 25 որոշումը , ՄԵԼ ԵՎ ՄԻԼ գեոդիզիայի և քարտեզագրման կետերում ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծերը, Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 2005թ. Դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՀ կառավարության 16.06.2005թվականի թիվ 904-Ն որոշմամբ Մեծ Պարնի համայնքի 06-075-252-061-01 ծածկագրի տակ գտնվող 5.9 հա խոտհարքից և արոտից առանձնացած 0.44063 հա հողամասըգտնվում է Մեծ Պարնի գյուղական համայնքին անհատույց փոխանցված հողամասերի ցանկում, ուստի ճանաչել 0.44063 հա հողամասի նմատմամբ Մեծ Պարնի համայնքի սեփականության իրավունքը:
2. Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համաձայն 19.01.2012 թվականի թիվ 25-Ն որոշման 2.5 կետի համարել փոփոխված և հաստատել 0.44063 հա հողամասերի նպատականին նշանակությունը ջրային, գործառնական նշանակությունը՝ ջրային :
3. Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի գտնվում ինժիներատրանսպորտային օբյեկտներիւ օտարման կամ անվտանգության գոտում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և չի առաջացնում սերվիտուտ:
4. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե Աերոդրոմ փողոց 1 հաղամաս:
5. Հաղամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՊԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Մեծ Պարնի համայնք, գ. Մեծ Պարնի, հեռ.0255 61897
էլ. փոստ՝ metsparni.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 18 » հունիս 2018 թ. N 30-Ա

ՄԵԾ ՊԱՐՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐԻ, ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ և ԾԱԽՍԵՐԻ ԵՌԱՄՍՅԱԿԱՅԻՆ ԲԱԽՇՄԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33 հոդվածով որոշում եմ՝

Մեծ Պարնի համայնքի 2018թ. բյուջեի 4-րդ եռամսյակից ճանապարհային տրանսպորտ նախահաշվով դասակարգում 04/05/01 4251 հոդվածից 250000 դրամ տեղափոխել 2-րդ եռամսյակ

Համայնքի ղեկավար՝ Գ. Պալյան